

մոռացումը, - ճակատագրական շիրմաքար՝ բոլոր գործօնութեան, հերոսներուն, երբ կը քաշուին կրկէսէն, ուրացումէն կրժուած կամ զրկանքէն անդամալոյծ, դէպի հանգիստը հողին, երբեմն դժնդակ բախտովն ալ անէծքներու գրադարաններ բարձրացած զգալու իրենց ոսկորներուն վրայ: Ընկեր Մաթիկ անուններ տուաւ, բոլորովին տարբեր մեր գիտցածներէն: Բայց չտուաւ, չկորցաւ տալ հարազատ տենդը, մատաղ հոգիները խմորի պէս կակուղ եւ ընկալուչ ընող անորակելի այն շունչը, որով երգահանուած էին աւագները իր սերունդին, ըՄփիւռքի այժմեան ակնոցով՝ խեղճ, յիմար մարդեր, բայց երեսուն տարի առաջ, հսկաներ, բոլորովին նման հեքիաթին դեւերուն: 1900ին, գրեթէ պատանի իմ միտքը շունչը ուժը անցնելու Մաթիկին բառերուն մշուշէն, խռովքէն անդին, ուղղակի հաղորդուելու համար այդ ոգիին, որուն մէկ տարբերակն էր սակայն մեր ապրածը, այնքան պարզ, ջարդերէն առաջ, ազատութեան երգարաններով ու վտանգին անմիջական սարսափովը գոյաւոր, մեզ ընելով փոխն ի փոխ նկուն ու հերոս: Մենք չէինք տեսած աւագները: Պոլիսը շատ մօտ էր ու արքայութեան չափ ալ հեռու: Ու հայ յեղափոխութիւնը մեզի համար մօտիկ թուրքն էր, աւագն ու վարպետը:

Դժուար է վերլուծումով, ան ալ յետահայեաց, լրիւ պատկերել ինչ որ մեր պատանութիւնը - իմ սերունդին կ'ակնարկեմ- առած է, իբր ժանգ, անկարող ատելութիւն, անտարագելի սուգ այդ վայրագ ժողովուրդէն, զոր մեր ջիղերը, խելքը, մեր սիրտը պարտաւոր եղան միասնաբար կրելու ո՛չ միայն անցնող դարու վերջերուն ու ներկային սկիզբը, այլեւ ամենայն հաւանականութեամբ աւելի քան հինգ-վեց դար: Մենք կը ճանչնայինք զայն, մորթելու, անպատուելու, կողոպտելու արարքներուն մէջ ամրախարխիսի, այնքան ինքնաբաւ: Ես զայն ունեցեր եմ իմ պատանի բոլոր նեարդներուն, գերազանցապէս թուրք քաղաքի մը մէջ: Երեսուն տարիներ, 1915էն ետք, կը մնան անկարող իմ ներսէն պուտ մը բան կոտ-